խաղաղութիւնը չգտաւ եւ միշտ էլ մնաց ոտնատակ, ալեկոծ ու աւեր՝ մինչեւ մեր օրերը:

Ե.

BELLO MAXIMO—ԳԵՐԱԳՈՅՆ ՊԱՏԵՐԱԶՄ

«Գերագոյն պատերազմ»,— այսպէս է որակում Մարկոս Աւրելիոսի սիւնի արձանագրութիւնը ի միջի այլոց եւ Հայաստանի դէմ մղուած կռիւները:

Հայ ժողովուրդի ռազմական, քաղաքական կորովի, նրա անկուն ու յամառ ազատական ձգտումների տեսակէտից գերազանցապէս ուշագրաւ ու խրատական են այս արձանագրութեան մէջ այս "Bello Maximo" (գերագոյն պատերազմ), որ փոխադրուած է այստեղ 176 թուին (Ք. Յ.): Ասել է, որ Տիգրանի մահից (54 կամ 56 թ. Ն. Ք.) շուրջ 220 տարի յետոյ Լուկուլլոսի եւ Պոմպէոսի «ընկճած» Հայաստանը տակաւին մարտնչում էր ամեհի կերպով իր անկախութեան համար եւ այնուհետեւ էլ քանի՜ դարեր...

Թւում է, որ հայ ժողովուրդը, իր մեծագոյն թագաւորի ոգուն ու լուսաւոր ձրգտումներին հաւատարիմ, իր մեծ ճակատագրի անհանդստութիւնն ունեցաւ միշտ, ինչպէս մի անօրինակ երկունքով բռնուած: Ի զուր չէր որ իր հինաւուրց դուսանները երգում էին՝

«Երկնէր երկին եւ երկիր,
«Երկնէր եւ Ծիրանի Ծով...

Լոյսի եւ ազատութեան յաւիտենապէս ծարաւ ժողովուրդ...

Բայց շարունակենք:

Արդէն իսկ Մեծն Տիգրանի անմիջական յաջորդները հայ ազգի ծանր եւ սքանչելի առաքելութեան գիտակցութիւնն ունին եւ, հակառակ իրենց մեծ հօր կրած ողբերգական ճախողանքին, չեն ուզում հրաժարուել ոչ նրա հսկայ ծրագրից, ոչ իրենց արքայից արքայ տիտղոսից եւ ոչ իրենց քաղաքական անկախութիւնից: Տիգրանի որդին Արտաւազդ ատամների կրճտոցով ու կսկիծով է համակերպւում իր պետութեան եւ իր իրաւունքների սահմանափակումներին: Մարկոս Անտոնիոս անառակի պէս մէկի հետ գործ ունի եւ դժուարաւ է գլուխ թափում այդ փառամոլ, արկածախնդիր, կնամոլ հռովմայեցուն հետ, որ Արեւելքն է ընտրել ասպարէզ իր սանձարձակ քմահաճոյքներին ու վայրագ բնազդների համար: Վատ զօրավար, անտաղանդ քաղաքագէտ, վաւաշոտ ու անհոգ՝ նա շատ հեշտ է ընկնում Պարթեւների ծուղակը իր ամբողջ բանակը կորցնում, չանսալով Արտաւազդի զգուշաւոր խորհուրդներին: Եւ այնուհետեւ հայ թագաւորը, հակառակ իր բոլոր զգաստութեան, անկարող է լինում իր երկիրը ազատել Մ. Անտոնիոսի ոտնձգութիւններից, որ նրան մեղադրում է դաւի մէջ իր դէմ:

Պարթեւներից կրած իր պարտութիւնը որեւէ կերպով փոխարինելու համար, Մ. Անտոնիոս իր հայեացքը Հայաստանին է ուղղում եւ, երբ իր նենգ որոգայթները չեն յաջողում հայ թագաւորին իր ձեռքը ձգել, նա առանց պատերազմ յայտարարելու յանկարծուստ յարձակում է Արտաշատի վրայ եւ՝ Արտաւազդին գերի վերցնելով՝ Եգիպտոս է տանում իր յաղթական թափորին զարդ կազմելու ի հաճոյս իր ախտակէզ սիրուհուն՝ Կլէոպատրայի: Եւ այստեղ իսկ, այս չղթայակապ եւ անարգ վիճակում՝ Արտաւազդ վայրկեան իսկ չմոռացաւ, որ ինքը արքայից արքայ է եւ Մեծն Տիգրանի զաւակ: Ու երբ Մարկոս Անտոնիոս բռնադատեց նրան՝ գլուխ խոնարհել Կլէոպատրայի առաջ, նա հակառակ մահու սպառնալիքին, զայրոյթով ու արհամարհանքով մերժեց այդ նուաստացումը մի անառակ կնոջ առջեւ: Եւ ազնիւհոգի հայ թագաւորը մահն ընդունեց, բայց ոչ նուաստացումը՝ իր եւ իր հայրենիքի:

Հռոմայեցի կոնսուլի կատարած այս զզուելի ու տմարդի ոճիրը ցնցեց համայն հայոց աշխարհը: Երկրի մեծ սուգը սիրուած թագաւորի եղերական վախճանի համար հաւասար է կրած անարգանքին: Հռոմ ու հռոմայեցի անունը, առանց այս էլ գրաւչութիւնից զուրկ, դարձաւ նողկալի հայ ժողովուրդին: Եւ երբ ի պատասխան իր ծնողի այս եղկելի վախճանի իր որդին ու դահաժառանգը՝ Արտաշէս հրամայեց Հայաստանում եղած բոլոր հռոմայեցիները կոտորել, զարհուրելի նախճիրներ տեղի ունեցան մեր աշխարհի մի ծայրից միւսը: Զայրոյթից խելայեղ ժողովուրդը անգութ եղաւ, ինչ որ բացատրելի է միմիայն այդ ժամանակներում իշխող դաժան բարքերով: